ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ
2024 թ. դեկտեմբերի 4-ի թիվ 4 նիստի

Գիտխորհրդի նախագահ Ն. Մարտիրոսյանն առաջարկեց հաստատել նիստի օրակարգը: Բաց քվեարկությամբ ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

ԼՍԵՑԻՆ.- Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի միջնորդությունը՝ նույն ամբիոնի հեռակա ուսուցման վճարովի համակարգի ասպիրանտ (ընդունվել է 2020 թ.) Լիանա Ներսեսի Մարտիրոսյանին ատեստավորելու առաջարկով (թեկնածուական ատենախոսության թեման «ԶԼՄ-ները՝ որպես քաղաքական միֆաստեղծման միջավայր(1990-2018)»):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Ա. Մենեմշյան, Գ. Աբրահամյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Լ. Ն. Մարտիրոսյանի կատարած աշխատանքը համարել բավարար և ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ.- Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի միջնորդությունը՝ նույն ամբիոնի հեռակա ուսուցման վճարովի համակարգի ասպիրանտ (ընդունվել է 2020թ.) Դիանա Դերենիկի Բախշյանին չատեստավորելու առաջարկով (թեկնածուական ատենախոսության թեման «Մանիպուլյացիոն տեխնոլոգիաների կիրառումը հանրության հետ կապերում»):

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Աբրահամյանը տեղեկացրեց, որ Դիանա Բախշյանը չի ներկայացրել հաշվետվություն, չի պատասխանում հեռախոսազանգերին և ամբիոնից ուղարկված էլեկտրոնային նամակներին, չի վճարել ուսման վարձավճարը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Ա. Մենեմշյան, Զ. Սարգսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով արձանագրված վիճակը՝ Դ. Դ. Բախշյանին չատեստավորել:

ԼՍԵՑԻՆ- Դ. Պետրոսյանի հաղորդումը «Մեդիափոխակերպումները ավանդականի և արդիականի փոխառնչությունների համատեքստում» գիտաժողովի արդյունքների մասին:

Դ. Պետրոսյանը նշեց, որ ֆակուլտետի հիմնադիր դեկան Գառնիկ Անանյանի 90-ամյակին նվիրված «Մեդիափոխակերպումները արդիականի ու ավանդականի փոխառնչությունների համատեքստում» գիտաժողովին ներկայացված էր տասը զեկուցում, հարգելի պատճառով չմասնակցեցին զեկուցողներից երեքը: Թեմաները

արդիական էին, տեղի ունեցան քննարկումներ, կարծիքներ և տեսակետներ փոխանակվեցին: Դ. Պետրոսյանի կարծիքով՝ նման գիտաժողովներ ցանկալի է կազմակերպել տարին առնվազն երկու անգամ, քանի որ ժամանակակից մեդիայում և մեդիամիջավայրում տեղի ունեցող զարգացումները ֆակուլտետի դասախոսների համար հետազոտելու և վերլուծելու լայն հնարավորություններ են բացում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Մարտիրոսյան, Ա. Մենեմշյան, Զ. Սարգսյան, Մ. Կարապետյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- **Բակալավրիատի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների հաստատման հարցը:**

Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ 2024/25 ուստարում հեռակա ուսուցման 5-րդ կուրսում սովորում է 7 ուսանող, ապա ներկայացրեց ավարտական աշխատանքների թեմաները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Դ. Պետրոսյան, Ա. Մենեմշյան, Գ. Աբրահամյան, Ա. Ավետիսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաստատել ներկայացված թեմաները:

ԼՍԵՑԻՆ.- ԵՊՀ ռեկտորի հրամանով ԵՊՀ ասպիրանտի կարգավիճակ ստացած Արցախի պետական համալսարանի առկա ուսուցման անվճար հիմունքներով ասպիրանտ (Ժ. 01.06. «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ) Մելինե Կարոյի Սարգսյանի ատենախոսության թեման վերահաստատելու և գիտական ղեկավարին վերանշանակելու հարցը (Մելինե Կարոյի Սարգսյանը ս/թ նոյեմբերի 1-ից տեղափոխվել է ԵՊՀ և հրամանագրվել անվճար հիմունքներով մինչև 2025թ. հունիսի 29):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Դ. Պետրոսյան, Գ. Աբրահամյան, Ա. Մենեմշյան, Զ. Սարգսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Մելինե Կարոյի Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Արցախի տպագիր մամուլը 2010-2023 թթ.»:

բ) Գիտական ղեկավար վերանշանակել բ.գ.թ., դոցենտ Ն. Ն. Մարտիրոսյանին:

Նիստի ավարտին Դ. Պետրոսյանը տեղեկացրեց, որ դեկտեմբերի 18-ին և 19-ին 4-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ տեղի կունենա ուսանողական գիտաժողով: Զեկուցվող թեմաները վերաբերում են ավարտական աշխատանքներին: Դ. Պետրոսյանը նշեց, որ այս տարի ավելի շատ ուսանողներ են ցանկություն հայտնել մասնակցելու:

Գիտխորհուրդը հավանություն տվեց նախաձեռնությանը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ